# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

***ՀՀ ոստիկանության կարիքների համար ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-16/8-ԾՈ-ՍԿԱՆ ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի***

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.03.2016թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին. հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ պետ. ոստ. գնդապետ Ռ.Խանզրադյան, անդամներ՝ ՀՀ ոստիկանության ՏՎ իրավախորհրդատու Գ. Մարտիրոսյան. ՀՀ ոստիկանության ԾՈ տնտեսական բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ Ե.Ստեփանյան, ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստ.կապիտան Ս.Սեդրակյան. ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստ.ավագ լեյտենանտ Մ.Հայրապետյան, քարտուղար՝ ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ ԳՀՓՁ բաժնի ավագ տեսուչ, ոստ. կապիտան Բ.Փահլևանյան:

Օրակարգ

<u>Հայտերի բացման և գնահատման նիստի մասին</u>

1. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները:*

*ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված* **ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-16/8-ԾՈ-ՍԿԱՆ** *ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել <<Օնլայն Քոմփյութերս>> ՍՊԸ-ն, <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ն, <<Կոմպասս>> ՍՊԸ-ն, <<Տեխնոֆորում>> ՍՊԸ-ն, <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ն, <<Միկրորինգ>> ՍՊԸ-ն:*

*2. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.*

*2.1 <<Օնլայն Քոմփյութերս>> ՍՊԸ-ի, <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ի, <<Կոմպասս>> ՍՊԸ-ի, <<Տեխնոֆորում>> ՍՊԸ-ի, <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի, <<Միկրորինգ>> ՍՊԸ-ի -ի կողմից ներկայացրած՝ մրցույթին մասնակցելու փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:*

*3. Մասնակիցների առաջարկած գները /տես աղյուսակ 1/.*

*Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:*

*Ընդունվեց որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

*4.* <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ն ներկայացրել է 2-րդ չափաբաժնով չհիմնավորված ցածր գնային առաջարկ, սակայն հիմնավորում չներկայացնելու համար վերջինիս հայտը մերժվել է:Այնուհետև կազմակերպվել են բանակցություններ, քանի որ 3-րդ չափաբաժնի գնային առաջարկը գերազանցել է նախահաշվային գինը:Սակայն բանակցության ընթացքում գնի նվազեցում տեղի չունեցավ, այդ իսկ պատճառով 3-րդ չափաբաժինը համարվում է չկայացած:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

**4.1 ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-16/8-ՃՈ-ՍԿԱՆ** ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվում՝

1-ին չափաբաժնով՝ <<Օնլայն Քոմփյութերս>> ՍՊԸ-ն

2-րդ չափաբաժնով՝ << Կոմպասս>> ՍՊԸ-ն

4-րդ չափաբաժնով՝ <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ն՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել 3 /երեք/ աշխատանքային օրով՝ <<Օնլայն Քոմփյութերս>> ՍՊԸ-ից, <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ից, <<Կոմպասս>> ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից կատարել հարցում՝ մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

**ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-16/8-ՃՈ-ՍԿԱՆ** ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջների իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ոստ. գնդապետ՝ Ռ.Խանզադյան

Անդամներ՝ Գ.Մարտիրոսյան

ոստ.փոխգնդապետ՝ Ե.Ստեփանյան

ոստ. կապիտան ՝ Ա.Սեդրակյան

ոստ. ավագ լեյտենանտ ՝ Մ.Հայրապետյան

Քարտուղար՝ ոստ. կապիտան Բ.Փահլևանյան

Աղյուսակ 1.

| | | Օնլայն Քոմփյութերս ՍՊԸ | | Էդվարդ Քոմփյութերս ՍՊԸ | | Կոմպասս ՍՊԸ | | Միկրոռինգ ՍՊԸ | | Տեխնոֆորում ՍՊԸ | | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գինը ԱԱՀ ով | Գինն առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ ով | Գինն առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ ով | Գինն առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ ով | Գինն առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ ով | Գինն առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ ով | Գինն առանց ԱԱՀ |
| Սեղանի համակարգիչ | հատ | **5880000** | **4900000** | 7730750 | 6442292 | 6198750 | 5165625 | 7065000 | 5887500 | 6924500 | 5770417 | 6375750 | 5313125 |
| Լազերային տպիչ | հատ | | | | | **3006000** | **2505000** | 3147000 | 2622500 | | | 1787760 | 1489800 |
| Լազերային տպիչ | հատ | | | | | 1350000 | 1125000 | 1449000 | 1207500 | 1622500 | 1352083 | 2747250 | 2289375 |
| Սկաներ համակարգչի համար, թերթային | հատ | | | **618800** | **515667** | | | | | 767000 | 639167 | 623610 | 519675 |